«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Բարոյական արժեքներ**

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մելանյա Շահվերդյան

Ուսումնական հաստատություն՝«Օձունի N2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն. 3

2. Բարոյական դաստիարակության տեղն ու դերը մանկավարժության պատմության մեջ. 6

3. Ուսուցիչի և դպրոցի դերը բարոյական արժեքների ձևավորման գործընթացում. 7

4. Բարոյական որակների ձևավորումը առարկայի դասերին. 10

ա/Ի՞նչ բարոյական արժեքներ են ձևավորվում հեքիաթի ուսուցման դասերին. 11

բ/Ի՞նչ բարոյական արժեքներ են ձևավորում առակ-ասացվածքները. . 13

գ/Ի՞նչ բարոյական արժեքներ է ձևավորում էարսը. 16

5. Եզրակացություն. 20

6. Օգտագործված գրականության ցանկ. 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կատարյալ տգիտությունը դեռ ամենամեծ չարիքը
չէ. առավել վատ է կիսատ-պռատությունը։
Պլատոն

Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեհամակարգի կարևորագույն մասը։Բարին ու չարը,սերն ու ատելությունը,հարգանքն ու ամոթը,արժանապատվությունն ու պատիվը հիմնական բարոյական արժեքներն են,որոնք բնութագրում են յուրաքանչյուր մարդու,նրա հոգևոր աշխարհն ու էությունը։

Բարոյականությունը սովորեցնում է մարդուն ապրել ճիշտ՝ համաձայն իր էության։

<<Փիլիսոփաները,պատմիչները,աստվածաբանները հատուկ տեղ են հատկացրել բարոյագիտական հարցերին,քննել առաքինությունների,բարոյականության բնույթի և աղբյուրների,չարի և բարու,կամքի ազատության,հոգևոր և բարոյական կատարելագործման,կյանքի և մահվան իմաստի,հայրենասիրության,ժողովուրդների և մարդու ազատության և այլ հարցեր>>*։

Քսանմեկերորդ դարում,երբ աշխարհը մոլեգնում է պատերազմներից և կործանարար աղետներից,երբ մարդը գիտակցաբար ոչնչացնում է իր նմանին,մյուսներն էլ բնազդաբար պայքարում են տանիք,սնունդ հայթայթելու և գոյությունը պահպանելու մասին,արդյո՞ք տեղին է խոսել ու մտածել բարոյական արժեքների և դրանց դաստիարակության մասին։

Այսօր համացանցը ողողված է ամենատարբեր տեղեկություններով,որոնք կարող են մարդուն գցել թյուրիմացության մեջսխալ ճանապարհով տանել։Երբեմն դժվար է լինում հասկանալ և տեսնել իրականը։Նույնիսկ չափահաս մարդն է խճճվում,էլ ուր մնաց անչափահասները չխճճվեն։

Քսանմեկերորդ դարի աշխարհաքաղաքականությունը,սպառազինության մրցավազքը և այլ նեգատիվ գործոններ խաթարում են մարդու կյանքի բնականոն ընթացքը և արդի դեռահասի մեծագույն սխրանքը կլինի բարին և չարը տարբերակելու կարողունակությունը։

Ուսումնասիրելով թեմայի հետ կապված տարբեր նյութեր, խորանալով

1. Հայկական համառոտ հանրագիտարան;Ա. Երևան։1990. էջ 500

մանկավարժական փորձիս և ունեցած գիտելիքներիս վրա՝ հասկացա,որ բարոյական արժեքներն են,որ պահում են մարդուն իր գոյության ընթացքում և ստիպում են ապրել ու կերտել մարդկության պատմությունը։ Բարոյական արժեքներն են,որ մարդու մեջ սերմանում են բարություն,հայրենասիրություն,խոհեմություն,ճշտապահություն,ազնվություն և նմանատիպ այլ արժեքներ,որոնք միշտ են գնահատվել։Կապ չունի՝ մարդը որ ժամանակաշրջանում է ապրում,նա պետք է իր մեջ կրի այդ արժեքները,իսկ դրանց ձևավորման համար մեծ դեր ու տեղ ունեն ընտանիքն ու դպրոցը,որտեղ կրթվում,կերտվում են երեխայի մարմինն ու հոգին,ձևավորվում է ապագայի մարդն ու քաղաքացին։

Բնավորություն կրթելը նույնքան հին է,որքան և ինքը կրթությունը,որը միշտ ունեցել և այժմ էլ ունի երկու խնդիր՝ օգնել երեխային լինել խելացի և դառնալ ավելի լավը։

Այս աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել՝

ա/ ի՞նչ տեղ է տրվել բարոյական դաստիարկությանը մանկավարժության պատմության մեջ

բ/ ի՞նչ փոփոխություններ են կրում բարոյական արժեքները ժամանակի փոփոխության հետ

գ/ո՞ր արժեքներն են մնայուն

դ/ ի՞նչ դեր ունի ընտանիքը բարոյական արժեքների ձևավորման գործընթացում

ե /ի՞նչ բարոյական դաստիարակություն և արժեհամակարգ է տալիս ժամանակակից դպրոցը սովորողին

զ/ ինչպե՞ս է կազմակերպվում բարոյական որակների ձևավորումը առարկայի/մայրենի,գրականություն/ ժամերին:

Ուսումնական գործընթացում բարոյական արժեքների ձևավորման հիմքում ընկած խնդիրներն են՝

1.Բացահայտել սովորողների արժեհամակարգի առանձնահատկությունները

2. Մշակել և կիրառել այնպիսի մեթոդներ,որոնք կնպաստեն սովորողի բարոյական արժեհամակարգի ձևավորմանը

3.Առաջադրել այնպիսի խնդիրներ,իրավիճակներ, որոնց լուծումները փնտրելիս սովորողները կհանգեն բարոյական արժեքների իմաստավորմանը:

Բարոյական դաստիարակության տեղն ու դերը մանկավարժության պատմության մեջ

Մարդու բարոյական վարքի չափանիշներ գոյություն են ունեցել դեռևս մարդկային հասարակության առաջացման ժամանակաշրջանում։Բարոյական դաստիարակությունը միշտ էլ հանդիսացել է դաստիարակչական աշխատանքի կարևոր կողմը։Երեխան իր կյանքի առաջին տարիներից ընկալում է բարոյական վարքի պարզագույն կանոնները։Ընտանիքը և դպրոցը դառնում են երեխայի բարոյական նկարագիրը կերտողները։

Բարոյական դաստիարակության և արժեքների մասին խոսել են հին փիլիսոփաներն ու մանկավարժները։

Արիստոտելը բարոյական դաստիարակության բնագավառում մեծ նշանակություն էր տալիս բարոյական հմտություններին ու վարժություններին։Նա առանձնացնում էր դաստիարակության երեք աղբյուրներ՝բնական ձիրքեր,հմտություններ և բարոյական դաստիարակություն։

Յան Ամոս Կոմենսկու կարծիքով մարդու ինքնակառավարումը դաստիարակության երեք նպատակներից մեկն է,որը ձեռք է բերվում բարոյական դաստիարակության միջոցով։Նա հիմնական առաքինությունն էր համարում խելացիությունը,չափավորությունը,արիությունը և արդարամտությունը։Սրանցից բացի, Կոմենսկին խորհուրդ էր տալիս երեխաների մոտ զարգացնել

համեստություն,հնազանդություն,բարյացակամություն ուրիշ մարդկանց նկատմամբ,մաքրասիրություն,կարասիրություն,քաղաքավարություն,հարգալիրություն տարեց մարդկանց նկատմամբ,աշխատասիրություն։

Կ. Գ. Ուշինսկին գտնում էր,որ մարդ պետք լինի կատարյալ ֆիզիկապես,մտավորապես և բարոյապես ներդաշնակորեն զարգացած։Դաստիարակության տարբեր կողմերի շարքում Ուշինսկին գլխավոր տեղը հատկացնում էր բարոյականության դաստիարակությանը։Նա գրել է. <<Մենք համարձակորեն արտահայտում ենք այն համոզմունքը,որ բարոյական ազդեցությունը կազմում է դաստիարակության գլխավոր,առավել կարևոր խնդիրը,քան ընդհանրապես մտքի զարգացումը և գլուխը գիտելիքներով լցնելը>>։

Կ. Գ. Ուշինսկու կարծիքով բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն,ազնվություն և ուղղամտություն,աշխատասիրություն,կարգապահություն և պատասխանատվությոան զգազմունք,սեփական արժանապատվության զգացմունք,որը զուգակցվում է համեստության հետ։

19-րդ դարում Ուշինսկին առավել շեշտադրում էր էր դաստիարակության բարոյական հիմքերի կարևորությունը։

Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք,տոկունություն,պարտքի զգացմունք։

Անցել են ժամանակներ,փոխվել են մտածողները,հասարակարգերը և մարդկանց արժեհամակարգը,բայց հստակ է մնացել այն,,որ երեխան պետք է մեծանա բարոյապես դաստիարակված,լինի բարոյական արժեքների կրողը և դառնա հասարակության արժանի անդամ։

Ճիշտ է՝վերևում անդրադարձանք ընդամենը մի քանի կարծիքի,բայց նկատեցինք,որ նշանավոր մտածողները առաջնային էին համարում նախ բարոյական,այնուհետև մտավոր և ֆիզիկական դաստիարակությունը։

Ընտանիքի և դպրոցի դերը բարոյական արժեքների ձևավորման գործընթացում

Ամենայն ուսուցման և դաստիարակության գործում ուսուցիչն է իր մտածելակերպով։

Դիստերվիգ

Բարոյական արժեքները չափանիշներ են,որոնք օգնում են մարդուն առօրյա կյանքում ազնիվ և արդար որոշումներ կայացնել։

Բարոյականությունը մարդկանց վարքի կարգավորման գիտակցության ձև է,որ արտահայտվում է կյանքի գրեթե բոլոր ոլորտներում։

Հետևելով բարոյական արժեքներին՝ երեխաները կարող են զարգացնել լավ բնավորություն և դրական անձնական հատկություններ։

Բարոյական արժեքներ սերմանողը առաջին հերթին ընտանիքն է։Առողջ սերմեր ցանելն առաջին հերթին ընտանիքի կարևորագույն պարտքն է։Փոխադարձ սիրո,հարգանքի մթնոլորտում մեծացող երեխան օրինակ է վերցնում ծնողներից,ծնողը դառնում է քաջության,բարության,գեղեցկության չափանիշ։ Երեխան ձգտում է նմանվել հայրիկին կամ մայրիկին։Տեսնելով ծնողների հարգանքը տատիկ-պապիկների հանդեպ՝ երեխան հասկանում է,որ պետք է միշտ ուշադիր լինի ծերերի և մեծերի հանդեպ։Ամենուր ծնողը պետք է օրինակ ծառայի իր պահվածքով,խոսքով,վարքով։

Բարոյական արժեքներն են օգնում ձևավորել բնավորության դրական գծեր,որոնք են բարությունը,կարեկցելը,ազնվությունը և համեստությունը։

Ընտանիքն օգնում է երեխային ճիշտ մտածելու և դատողություններ անելու հարցում։Ընտանիքի աջակցությունը երեխային դարձնում է ինքնավստահ,լավատես,կողմնորոշվող։Երեխան ավելի շուտ է գտնում իր տեղը և հասկանում իր դերը արտաքին աշխարհում։

Երբ ընտանիքում երեխայի հետ պարզ ու անկեղծ են խաասում,հաշվի են առնում նրա կարծիքը, ապա երեխան իրեն սիրված ու գնահատված է զգում։

Անհատի բարոյական նկարագիրը կերտելու հարցում ընտանիքից հետո կարևոր է դպրոցի դերը։Եթե երեխան տանը շփվում է միայն ընտանիքի անդամների հետ,ապա դպրոցում շփվում է տարբեր ընտանիքներ ներկայացնող և տարբեր բարոյական արժեքներ կրող մի քանի տասնյակ մարդկանց հետ։Երեխայի համար դպրոցում ավելի դժվար է , և եթե ուսուցիչները ճիշտ և տեղին դաստիարակչական աշխատանքներ չեն կատարում,ապա երեխայի մեջ արժեքներ են փոխվում և խաթարվում։

Մեծ է ուսուցչի դերը երեխայի բարոյական դաստիարակության գործում։Նա իր պահվածքով,իր օրինակով պետք է դառնա երեխաի իդեալը։ Աշակերտը պետք է ձգտի նմանվել իր ուսուցչին։Յան Ամոս Կոմենսկին մեծ տեղ էր տալիս ուսուցչին՝ նրա պաշտոնը համարելով չափազանց պատվավոր,<<այնքան հիանալի,որքան ոչ մի ոիրիշը արևի տակ>> * ։

Այսօր հատկապես մեծ է դասվարների դերը,որովհետև նրանց շատ են սիրում երեխաները,անվերապահորեն ընդունում են ասածները։Ավելի դժվար է բարձր դասարանների աշակերտների հետ աշխատելը,որովհետև այսօր ուսուցչի դերն ու հարգանքը նվազել է հասարակության մեջ և դրա փոխարեն ավելացել է համացանցի տեղն ու դերը դեռահասների ու հասարակության կյանքում։Աշակերտը շատ հարցերի պատասխաններ ստանում է համացանցից,և ինքն է որոշում՝ինչ ընտրի,ինչպիսին լինի։

Այնուամենայնիվ,դպրոցը,դասղեկն ու բոլոր ուսուցիչները պետք է իրենց աշխատանքային գործունեության մեջ կարևոր տեղ հատկացնեն բարոյական արժեքների զարգացմանը։Այդ ճանապարհին ուսուցիչը բազում խնդիրներ է լուծում,հաղթահարում մեծ դժվարություններ։Հեշտ է տրվում այն ուսուցչին,ով ճանաչում է իր աշակերտին,գիտի նրա բնավորության թույլ և ուժեղ կողմերը,հոգեբանությունը,ոգևորության աղբյուրները։Ուսուցիչները բազմակողմանի աշխատանքներ պետք է կատարեն՝համագործակցելով ծնողների,երեխաների,համայնքի և հոգևորականների հետ՝բարոյական նկարագրով քաղաքացի կերտելու նպատակով։

Բարոյական զգացմունքները անհատական են,տրված բնությունից։ Որոշները ձեռք են բերվում մարդկային շփումների ընթացքում, արվեստի հետ հաղորդակցման միջոցով։Դպրոցի առաքելությունն այս ամենը գտնելն ու խորացնելն է,դպրոցը պետք է նպաստի գթասիրտ, մարդասեր, ապրումակցող, գեղագիտական բարձր ճաշակ ունեցող անհատի ձևավորմանը։

3<<Մանկավարժության պատմություն>>1972 Երևան , էջ 52

Բարոյական զգացմունքները բարձրագույն արժեք են դառնում միայն բարոյական գործունեության հետևանքով։ Ապրումները միշտ էլ բարոյական են,այլ է դրանց դրսևորումը։Եթե մտքով բարեգործ ենք,բայց գործով չի դրսևորվում, ուրեմն ոչ ոք չի հավատա մարդուն։ Դպրոցը միշտ պետք է աջակցի սովորողին, օգնի, որ նա դրսևորի իր բարոյական արժանիքները։

Բարոյական դաստիարակությունը, սակայն, թերի կլինի,եթե դրան համահունչ չէ մտավոր դաստիարակությունը։

Դպրոցը,ուսուցիչը սովորողի մեջ այս երկուսը պետք է խորացնեն զուգահեռաբար, միմյանց շաղկապված։

Կարելի է ենթադրել, որ մարդու գիտակցությունը և վարքագիծը միասին բնորոշում են մարդու բարոյական կերպարը և որոշում նրա դերը այլ մարդկանց հետ հարաբերություններում։

Դպրոց և ընտանիք։Ահա այն երկու միջավայրը ,որը դաստիարակելու է կայուն վարքագծով, գիտակից,հեռատես ու նրբանկատ անհատին։

Բարոյական որակների ձևավորումը առարկայի դասերին

ՈՒսումնական երկարատև գործընթացում բոլոր առարկաների դասերին էլ ուսուցիչը սովորողի մեջ ձևավորում է բարոյական որակներ։Բայց առարկաների մեջ կան մի քանիսը,որոնք իրենց ողջ բովանդակությամբ ստեղծված են հենց

բարոյական արժեքներ ձևավորելու նպատակով։Այդ առաքելությունը իրականացնողներն էլ մայրենիի,գրականության, պատմության և հասարակագիտության ուսուցիչներն են։

Որպես մայրենիի և գրականության բազմամյա փորձ ունեցող ուսուցչուհի՝ուզում եմ ներկայացնել պատառիկներ տարբեր թեմաներով դասերից,որոնք հատկապես նպատակաուղղված են եղել բարոյական արժեքների ձևավորմանը։

ա/Ի՞նչ բարոյական արժեքներ են ձևավորվում հեքիաթի ուսուցման դասերին

Դեռևս մանկուց երեխաները լսում են հեքիաթներ,այսօրվա փոքրիկը նաև հնարավորություն ունի օրվա մեջ մի քանի ժամ դիտել մուլտֆիլմեր և իր համար առանձնացնել չարն ու բարին,լավն ու վատը,ունենալ իր սիրելի հերոսներին։Նախակրթարանն ու դպրոցը հեքիաթը ճիշտ ներկայացնողներն ու դաստիարակողներն են։Հեքիաթը մեծ դեր ունի սովորողների բարոյական որակների ձևավորման գործում։

Հեքիաթներ ուսումնասիրում են տարրական դասարաններում և 5-րդ դասարանում՝<<Մայրենի>> առարկայի դասաժամերին։Դասագրքում կան մի քանի ուսանելի հեքիաթներ ,որոնք իսկապես դաստիարակում են և՛ մեծերին ,և՛ փոքրերին։

<<Երկնքից երեք խնձոր ընկավ>> բաժնում զետեղված <<Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը>> , <<Մուրացկանը և հարուստը>>, <<Այգեպան Մոսին>>,<<Խոսող ձուկը>>,<<Եղեգնուհին>> և <<Երեք խորհուրդ>> հեքիաթները

սովորողների մեջ խորացնում են բարության, արդարամտության,ազնվության,աշխատասիրության,համածմբվածության և այլ դրական հատկանիշներ։Երեխաները ժիշտ դատողություններ են անում,տարբերակում լավն ու վատը,չարն ու բարին,դրականն ու բացասականը։Խորհուրդներ են տալիս հերոսներին,փոխում հեքիաթի վերջաբանը։ Կյանքից օրինակներ են բերում,իրենց ուժերով և պատկերացմամբ բեմադրում հատվածներ։

Քանի որ վերոնշյալ հեքիաթների վերջում կան ասացվածքներ,շատ հաճախ անդրադառնում ենք ժողովրդական առած-ասացվածքներին։<<Իմաստության շտեմարան>> խորագրով քարտերի վրա գրված ասացվածքներից սովորողները գտնում են իրենց դասին համընկնողը,մեկնաբանում,նմանատիպ մեկ ուրիշը հիշում լսածներից կամ անցած հեքիաթներից։Շատ են սիրում հորինել հեքիաթ և վերջում կիրառել որևէ ասացվածք։Հեքիաթները երեխաներին սովորեցնում են սիրել հարազատին,լավություն անել անծանոթին՝առանց փոխադարձ ակնկալիքի,աշխատել և գեղեցկացնել շրջապատն ու հայրենիքը,լսել մեծերի խորհուրդները,ապրել սեփական աշխատանքի վաստակով։

Սովորողները սիրում են հեքիաթները և գիտեն,որ հեքիաթի վերջում միշտ հաղթում է բարին,բայց նաև հասկանում են,որ կյանքը հեքիաթ չէ և ճիշտ ապրելու բանաձևը բարձր բարոյական արժեհամակարգ ունենալն է։Հեքիաթի ուսուցման դասերին շատ հաճախ հարցնում եմ,թե տվյալ իրավիճակում,որում հայտնվել է հերոսը,ինքը ի՞նչ կաներ։Աշակերտի պատասխանից որսում եմ դրականն ու բացասականը,խորհուրդներով աննկատ ուղղորդում դեպի բարին ու դրականը։Խնդրում եմ թղթի վրա բնութագրել իրենց,իրենց նմանեցնել հերոսներից մեկին,թվարկել իրենց բնավորության լավ ու վատ կողմերը։

Լրացուցիչ ընթերցում եմ <<Բնավորությունների ծառերի մասին>> հեքիաթը,որը երեխաների մեջ մի շարք բարոյական որակներ է ձևավորում։Անմատչելի լեռնահովտում աճում էին Բնավորությունների ծառերը,որոնք ունեին չորս կարևոր ճյուղեր՝հարաբերությունը մարդկանց հետ,վերաբերմունքը իր անձի,աշխատանքի և իրերի հանդեպ։Ծառերից մի մասի վրա կանգնած էին ազնվությունը,առատաձեռնությունը,արժանապատվությունը։Որոշ

ծառերի վրա փաթաթվել էին սուտն ու կեղծիքը։Ծառերից մի քանիսըի ճյուղերը կախվել էին ինքնահավանությունից,իսկ որոշների ճյուղերն էլ ագահությունից քսվում էին հողին։Կային այնպիսի ամուր ու տոկուն,ուղղաձիգ ծառեր,որոնց անհնար էր սղոցել։Կային և փափուկ,դյուրաթեք ծառեր,որոնց բները կավի նման կարելի էր ծեփել։Լեռնահովտում աճող ծառերը տարբեր էին,որովհետև տարբեր հողերի վրա էին աճում։Արևը մեկին շատ էր ջերմացնում,իսկ մյուսին՝ոչ։Անձրևըհավասարաչափ չէր տեղում,քամին էլ տարբեր էր լինում յուրաքնչյուրի հանդեպ։Որոշները դիմանում էին քամիներին,որոշները՝ խոնարհվում կամ արմատախիլ լինում։

Այդպիսին են նաև մարդիկ։Սովորողները քննարկում են,գովաբանում տոկուն,ամուր,,արդար ծառերին,նույնացնում մարդկանց հետ։Նրանք հասկանում են,որ իրենք ևս պետք է ապրեն ու մեծանան այդ որակներով՝ազնիվ,ճշտախոս,արդարամիտ,պարզ,մարդասեր ու պարտաճանաչ։

Երեխաները նաև հետևություններ են անում հեքիաթների ավարտի շուրջ. <<Ինչու՞ է միշտ հաղթում բարին>> հարցին պատասխանում են,որ մարդը ուզում է խաղաղ ու երջանիկ ապրել,որ կյանքում ցանկալին ու ընդունելին միայն բարին է։

բ/Ի՞նչ բարոյական արժեքներ են ձևավորում առակ-ասացվածքները

Մեծ է առակների և ասացվածքների դերը երեխայի մոտ բարոյական արժեքների ձևավորման և խորացման գործընթացում։Այս ժանրերը սովորողների մեջ ձևավորում են արժեքային համակարգ։

Նախորդ ենթագլխում նշեցի,որ հեքիաթները ավարտվում են ասացվածքներով,որոնք քննարկվում են։<<Իմաստության շտեմարան>> քարտերի վրա 5-ական ասացվածքներ են ներկայացվում սովորողներին,և նրանք այդ շարքից գտնում են թեմային համապատասխանողը,խմբավորում են ասացվածքները,գտնում,թե ինչ խրատներ կան դրանց մեջ։Բարոյականություն,խրատ,կենսափորձ դաստիարակող ասացվածքները մեր

բանահյուսության մեջ շատ են և օգնում են աշակերտներին դրանց իմաստը ընկալել և եզրահանգումներ անել կյանքի և որոշ փոխհարաբերությունների մասին։

Ստորև ներկայացնում եմ մի քանի ասացվածքներ,որոնք օգտագործում եմ դասերի ընթացքում՝բարոյական արժեքներ ձևավորելու նպատակով.

Ինչ որ ցանես, այն կհնձես։

Ինչ որ ասես,այն կլսես։

Հարևանիդ համար մեկն ուզի, որ Աստված քեզ երկուսը տա։

Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը։

Աջով տուր ,որ ձախով առնես։

Լավություն արա,ջուրը գցիր։

Տաշած քարը գետնին չի մնա։

Անգին քարը ցեխի մեջ էլ գին ունի։

Հարևանի հարսը սիրուն է երևում։

Անցած բանի հետևից չեն ընկնի;

Էշը եթե մի տեղ ցեխն ընկնի,էլ այդ տեղով չի անցնի։

Ջուրն ընկնողը անձրևից չի վախենա։

Ծովն անցնողը առվում չի խեղդվի։

Խրատ տվողը շատ է,հաց տվողը՝քիչ։

Ամեն օր ջուրը գերան չի բերի։

Տատը /պապը/ ամեն օր գաթա չի ուտի։

Քամու բերածը քամին էլ կտանի։

Երկաթը տաք-տաք կծեծեն։

Ժամանակ կա՝լռելը ոսկի է,խոսելը՝արծաթ,ժամանակ կա՝ խոսելը ոսկի է,լռելը՝ արծաթ։

Վերմակիդ համեմատ ոտքդ մեկնիր։

Մի ձեռքով երկու ձմերուկ չեն վերցնի։

Կրակի վրա յուղ չեն լցնի։

Ասացվածքների այս շարքով աշակերտները ծանոթանում են բանահյուսության տեսակին,հասկանում դաստիարակչական

նշանակությունը,կարողանում են խոսքի մեջ տեղին օգտագործել ասացվածքները,զարգանում է քննադատական և ստեղծագործական մտածողությունը։

Երբեմն հանձնարարում եմ շարադրանք գրել՝վերնագիր ընտրելով որևէ ասացվածք;Ստեղծագործական մտքի թռիչքը շատ հետաքրքիր է,արդյունքը՝հրաշալի։Գրում են տրամաբանված,կապակցված,վերնագրին լրիվ համապատասխանող պատմություններ և ճիշտ ավարտ են ընտրում՝այն ամփոփելով համապատասխան ասացվածքով։

Նույն դերն ու դաստիարակչական նշանակությունն ունեն առակները։Տարբեր դասարաններում սովորողները ծանոթանում են հայ և համաշխարհային գրականության առակներին;5-րդ դասարանում ուսումնական ծրագրով նախատեսված առակները սովորեցնում են լինել ազնիվ,չմեծամտանալ,գնահատել սեփական ուժերը /<<Խխունջն ու սունկը>>/,գնահատել լավ մարդուն,որ մարգարտի նման թաքնված է ծովի խորքերում/<<Մարգարիտն ու փրփուրը>>/,գնահատել և շնորհակալ լինել արժանիքների համար,որ տրված են քեզ/<<Կյանքից թանկ բանը>>/,հիշել նրանց,ովքեր չերևալով՝օգնում են ուրիշներին հասնել հաջողությունների/<<Տերևներն ու արմատները>>/։

Աստվածաշնչյան առակներից ուսումնասիրում ենք<<Մարդը,որ ներել չէր ուզում>> առակը։Այստեղ շեշտը դրված է քրիստոնեական բարոյականության ոսկե կանոնի վրա. <<Այն ամենը,ինչ կամենաք,որ մարդիկ ձեզ անեն,այդպես և դուք արեք

նրանց>>։

Սովորողները եթե կարողանում են ճիշտ մեկնաբանել առակների բարոյախրատական ասելիքը,նշանակում է նրանք ճիշտ ճանապարհի վրա են և իրերը և երևույթները տեսնում են այնպես,ինչպես կան;Ճիշտ և առողջ

դատողություններ կատարող սովորողը,իմ կարծիքով, չի կարող բնավորության և բարոյականության վատ դրսևորումներ ցուցաբերել:

Տարիների ընթացքում նա կդառնա բարոյական դրական արժանիքներ ունեցող անհատ,որ իր օրինակով կդաստիարակի նաև ուրիշներին:

գ/Ի՞նչ բարոյական արժեքներ է ձևավորում էպոսը

Մեծ է հայ ժողովրդական էպոսի դերը սերունդների բարոյական դաստիարակության ու հոգևոր մշակույթի ձևավորման գործում:Էպոսի ուսուցման ընթացքում այլ հարցերից զատ խոսում և բարձր ենք գնահատում հերոսների պարզամտությունը,համառությունը,պատվասիրությունը,մարդասիրությունն ու ազատամտությունը:Շատ հաճախ ենք անդրադառնում հերոսների բնավորության բոլոր գծերին,գտնում դրականն ու բացասականը,արժևորում դրական գծերը,ժպտում և ուրախանում՝որոշ հատվածներ ընթերցելով:

Էպոսի հերոսների մեջ առանձնացնում եմ բնավորության մի քանի կարևոր գծեր:Առաջինը,իհարկե,քննարկում ենք նրանց <<ծուռ>> լինելը:

Հարց. <<Ի՞նչ եք,եթե նրանք իրականում <<ծուռ>> լինեին կամ մտքով տկար,ժողովուրդը կսիրեր և կգովերգեր նրանց>>:Սովորողների մեկնաբանությունները նունատիպ են. նրանք իրականում պարզ ու միամիտ

մարդիկ են,ովքեր բոլորին նայում են իրենց տեսանկյունից,բայց երբ հասկանում են պահի լրջությունը,արդեն համառ են և անդրդվելի։

Մեծ Մհերի ձի ընտրելու պատմությունը միշտ ժպիտ է պարգևում աշակերտներին և այդ պահից սկսած սիրում են նրան։Քանի որ Մհերը ոչ միայն իր ուժն էր ցուցադրում՝խփելով ձիերի գավակներին,այլ նաև ծռությունը,երբ քուռակին շալակած տանում էր։Ողջ քաղաքը ծիծաղում էր՝տեսնելով դա,իսկ Մհերը՝Սասնա ծուռը,արհամարհում էր բոլորին,որովհետև գիտեր,որ ուժեղ ձի է տանում։

Սովորողները գնահատում են Մեծ Մհերի համառությունը,ուժը,ինչ-որ տեղ էլ պատանեկան մեծամտությունը։Չէ՞ որ արդեն գիտեն,որ Մհերը ամենահայրենասեր ու Սասունին նվիրված հերոսն է։

Նա 15 տարեկանում առյուծ է կիսել հանուն ժողովրդի,որ սովից չմեռնեն։Իսկ դրանից առաջ հարցնում էր. <<առյուծն ի՞նչ է,իմա՞լ առյուծ>>,<<հեռվանց կուտի,թե՞ մոտենաս ու նոր կուտի>>։

Անվերջ են նրանց միամտության դրսևորումները;Դավիթը մի ամբողջ օր կռվում է արևի շողի հետ,Փոքր Մհերը չի թողնում անցնեն իր կառուցած կամրջի վրայով,ծեծում է և՛ անցնողներին,և՛ չանցնողներին։Սակայն ,միամիտ լինելով հանդերձ,մեր քաջազունները անմիտ ու անգետ չեն։Մեր ժողովրդի սիրելի հերոսները մանկությունից արդեն դառնում են գրագետ ու բանիմաց։Սանասարին ու Բաղդասարին կրթում է հայ քահանան,որ Ծովինարի հետ Բաղդադ էր մեկնել։Մեծ Մհերն էլ, երբ դարձավ յոթ տարեկան. <<Էնոր վանք-վարժատուն դրին,քիչ մը սորվավ,շնորհքով լցվավ>>։

Սասնա բոլոր քաջերը հմուտ որսորդներ ու անվեհեր մարտիկներ են,կառուցող-շինարարներ։Սասունը կառուցեցին Սանասարն ու Բաղդասարը,Մարութա բարձր Աստվածածինը՝Մեծ Մհերը,որը նաև այդտեղ ապաստան էր տալիս պանդուխտ մարդկանց։

Եթե թշնամին հանգիստ թողներ,ապա մեր քաջերը կապրեին,կարարեին ու կկառուցեին միայն։Նրանց ստիպում էին թուր վերցնել և կռվել ավազակների,հարկահանների ու բանակների դեմ։Ու այս ամենի մեջ ի՞նչն է հատկանշական,որ բարոյական արժեք է ու բնորոշ բոլորին՝վեհանձնությունը և անձնազոհությունը։Նրանք միշտ միայնակ են գնում կռիվ,չեն թողնում ուրիշները

խառնվեն։Նրանց վստահել է ժողովուրդը,և իրենք պատասխանատվություն են զգում նրանց առաջ։Անձնազոհ են բոլոր հարցերում,նրանք պատրաստ են մեռնել հողի,ծնողի,ժողովրդի համար։Մեծ Միհերն ու Արմաղանը Սասնա ճրագը վառ պահելու համար ծնում են Դավթին՝իմանալով,որ պիտի մեռնեն նույն օրը։

Սասնա բոլոր հերոսները սիրում են ազատությունը,ատում են բռնությունը ու երբեք անտեղի ոչ մեկի չեն նեղացնում կամ բռնանում։

Նրանք նաև զգացմունքային են,ծնողասեր,օժտված են զգայուն սրտով ,ջերմ ու խոր զգացմունքներով; Փոքր Միհերը երեք օր պառկած լացեց և ողբ ասաց ծնողների մահվան լուրը լսելուց հետո։

Դավիթը օրհասական ճակատամարտի ժամանակ հարգեց Իսմիլ Խաթունին և մի զարկը բաշխեց նրան,քանի որ իրեն մայրություն էր արել։Դավիթը քաջ էր ու բարի։Հարգում է մեծերին,լսում նրանց խորհուրդները,մեծ մարդասեր է
Կռիվ գնալուց առաջ զգուշացնում է թշնամուն,հրաժեշտ տալիս բոլորին,լսում և հարգում է նույնիսկ թշնամու բանակի ծերունու խոսքը։

Սասնա հերոսների յուրաքնչյուր արարք մի դաս է և խորհուրդ սերունդներին՝արժանապատիվ ու բարոյական նկարագիր կերտելու ճանապարհին։

Էպոսի սյուժեն և հերոսների նկարագիրն ու արարքները սովորեցնում են լինել հայրենասեր,ազատատենչ,մարդասեր,ազնիվ,պարկեշտ,անձնազոհ,վեհանձն,խիզախ,իմաստուն,խոհեմ,նպատակասլաց։

Էպոսի մեջ մեր ժողովուրդը չի կորցրել իր առողջ հումորը իր հերոսների հանդեպ,որոնք սովորական մարդիկ են և ունեն նաև մարդկային թուլություններ. . . Սասնա հերոսներին հենց այդ թուլություններն են մոտեցնում մարդկայինին և բնականին։

<<Սասնա ծռեր>> էպոսը բարոյախրատական մի մեծ հանրագիտարան է,որը սերունդների մեջ կարող է արթնացնել,սերմանել ու դաստիարակել բարձր ու վեհ արժեքներ , որոնց շնորհիվ էլ կդառնան հասարակության արժանապատիվ,վեհանձն ու կիրթ անդամներ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը կատարելուց առաջ ստեղծել և օգտագործել եմ հետևյալ գործիքակազմը.

- Կազմել եմ հարցաշար, որոնցով պիտի առաջնորդվեի աշխատանքը կատարելիս
- Հավաքել եմ համապատասխան գրականություն, որոնցում կգտնեի ինձ հետաքրքրող հարցերի պատասխանները
- Օգտվել եմ համացանցում եղած համապատասխան տեղեկատվությունից:

Թեման շատ հետաքրքիր էր և իր մեջ ներառում էր համամարդկային շատ խնդիրներ: Աշխատանքի մեջ փորձել եմ որոշակի չափով ներկայացնել նաև իմ փորձն ու գիտելիքները, որքանով դրանք առնչվում են այդ թեմային:

Ուսումնասիրության ընթացքում հասկացայ որ մարդկության համար միշտ էլ կարևոր են եղել բարոյական արժեքներն ու դաստիարակությունը: Ժամանակի փոփոխության, հասարակարգերի ձևավորման գործընթացում տեղի են ունենում փոքր ինչ փոփոխություններ, բայց կան արժեքներ, որ մնայուն են: Իմ կարծիքով բոլոր ժամանակների արամաբանության մեջ են <<լավ ու վատ>>, <<չար ու բարի>> հասկացությունները, և դրանք միշտ են լինելու: Յուրաքանչյուր մարդ և հասարակություն ունի դրանց սահմանման և ընկալման իր չափանիշները:

Աշխատանքի իրականացման ընթացքում եկա այն եզրահանգման, որ բարոյական արժեքների ձևավորման և դաստիարակության նպատակով սովորողների մեջ պետք է զարգացնել որոշակի կարողություններ՝ ինքնաճանաչողական, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակույթայի, որպեսզի հանենք ցանկալի վերջնարդյունքների:

Սովորողը

- կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, ընդունել սեփական յուրահատկությունները/ՀՊՁ-Հ36/
- ցուցաբերի հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն/ՀՊՁ-Հ41/

- դրսևորի մշակույթային ընկալման և արժևորման կարողություններ,արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ/ՀՊՌ-Հ42/
- ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր,արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը/ՀՊՌ-Հ43/
- վերահսկի իր զգացմունքները և,իր առջև դնի նպատակներ,մշակի դրանց հասնելու ուղիներ և լինի հետևողական/ՀՊՌ-Ա32/
- կարևորի իր՝ որպես քաղաքացու դերը հասարակության մեջ սոցիալական արդարության և ժողովրդավարական մշակույթի ձևավորման գործում,ցուցաբերի հարգանք ցանկացած մարդու արժանապատվության,հիմնարար իրավունքների և ազատությունների հանդեպ/ՀՊՌ-Ա35/
- Ճանաչի իր դերը և պատասխանատվությունը ընտանիքում,համքում և հասարակության մեջ/ՀՊՌ-Ա38/
- դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ,ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում/ՀՊՌ-Ա39/:

Ամփոփելով հետազոտական աշխատանքս՝ նշեմ, որ ուսուցման գործընթացում սովորողների մոտ բարոյական բարձր արժեքների սերմանումը պակաս կարևոր չէ գիտելիքների փոխանցումից, կարողությունների և հմտությունների ձևավորումից:Այստեղից էլ բխում է այն անհերքելի ճշմարտությունը, որ ուսուցիչն է այն առանցքային անձը, ով իր ուսերին է վերցնում այս անչափ պատասխանատու աշխատանքը:

Չնայած բոլոր առարկաների դասաժամերին էլ ուսուցիչները իրականացնում են բարոյական դաստիարակություն,բայց մայրենիի և գրականության դասաժամերին բարոյական դաստիարակությունը նաև ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մաս է:Էպոսի, հեքիաթների, առակների միջոցով աշակերտներին է մատուցվում բարոյական բարձր արժեքների մի ողջ համակարգ, և ուսուցչի անմնացորդ և հմուտ աշխատանքը պիտի խթան հանդիսանա , որ հետագայում աշակերտները դառնան այդ արժեքների կրողները, կիրառողները և փոխանցողները:

Ուսուցիչները ճիշտ ընտրված մեթոդական մարտավարության շնորհիվ պետք է կարողանան բացահայտել աշակերտների մոտ արդի բարոյական արժեքների առանձնահատկությունները և կազմակերպեն հետագա արդյունավետ աշխատանքը:

Շատ կարևոր է գրական երկերի, առակների,էպոսի,հեքիաթների և արդի իրականության հետ կապերի ստեղծումը, համեմատությունների և վերլուծությունների իրականացումը:

Բարոյական արժեքները հասարակական կյանքը կարգավորող նորմատիվ բնույթ են կրում, և այս հանգամանքով է պայմանավորված, որ հնագույն ժամանակներից սկսած օրենքների հիմքում ընկած է եղել բարոյական արժեքների պաշտպանությունը:Վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ դպրոցում ստացած բարոյական արժեքները հիմնաքար են հանդիսանում աշակերտների հետագա քաղաքացիական կյանքի համար:Եվ ապագայի հասարակության արժանապատիվ անդամների կերտումը մեծապես կախված է դպրոցում ստացած բարոյական դաստիարակությունից

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Սասունցի Դավիթ>>,Հայ ավտորաց,1961 Երևան

2Ն. Ա. Կոստանտինով,Ե. Ն. Մեդինսկի,Մ. Ֆ. Շաբասաս Անկավարժության պատմություն,1972,<<Լույս>>,Երևան

3. Ն. Ի. Բոլդիրև. Դասընթաց,1974,<<Լույս>>,Երևան

4. Հայ կանանց համառոտ հանրագիտարան Ա,Երևան,1990

5. Նախաշավիղ 3-4, Տիվորողների բարոյական որակների ձևավորումը հեքիաթների միջոցով,2005,Երևան

6. Հ. Բախչինյան,Ա. Ապինյան,Հ. Թամրազյան,<<Հայ գրականություն>> 2005,<<Լույս>>Երևան

7. Մ. Նիկողոսյան-Հայ ժողովրդական առածներ և ասացվածքներ,2013,Երևան

8. Դ. Գ. ուրջինյան,Թ. Վ. եքսանյան,Ա. Գալստյան <<Մայրենի 5>> 2015,<<Էդիթ Պրինտ>>, Երևան

9. Մարդ. և հասարակություն N 1. 2016

Ա. Իզոյան<<Ազատության և բարոյականության հիմնահարցի իմաստավորումը 21-րդ դարի երիտասարդության շրջանում>>

10.erexa.am,cdn.armpproject.org<<Երեխայի բարոյական արժեքներն ու բնավորությունը>>: